ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2023թվականի N 33

ՎԻԼԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով "Կաթնագործ" այգեգործական ընկերության կողմից Վիլեն Պետրոսյանին տրված այգեգործի վկայականը, Վիլեն Պետրոսյանի դիմումը սեփականության իրավունքը ձևակերպելու մասին և, քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քանի որ Կաթի գործարանի այգեգործական միության կողմից 0.060հա հողամասը տրվել է Վիլեն Պետրոսյանին, հատկացված հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել սեփականության իրավունքը, և հատկացվածից ավել զբաղեցրած 0.0281հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վիլեն Պետրոսյանի սեփականության իրավունքը: Այգեգործի վկայականի 4-րդ էջում գրված անձիք հանդիսանում են Վիլեն Պետրոսյանի ընտանիքի անդամներ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Լոռու մարզային ստորաբաժանումում:

3.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 09.01.2023 թ-ի թիվ 02 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՐՏԻ 2023թվականի N 34

ՏԱՏՅԱՆԱ ԳԼԱԶՈՎԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, "Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և իննակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին"' ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021 թ-ի թիվ 698-Ն որոշմամբ, "Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հողամասի և շինությունների հաստատված հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991 թ-ի թիվ 23 որոշումը, "Տարոն Վարդանյան Արտուրի" ԱՁ – կողմից /որոկավորման վկայական 014 2011-12-05, մուտքագրման ծածկագիր՝ 2023Q9Y5BA/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 61-2023 N1514 վկայագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի 06-043-0028-0008 կադաստրային ծածկագրով 0,29441հա մակերեսով հատկացված և որպես առանձին միավոր սահմանազատված հողամասի նկատմամբ օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Տատյանա Գլազովայի /ծնվ.1959թ./ սեփականության իրավունքը:

2.Ճանաչել 0,29441հա հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը շխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող կառուցված բոլոր շենք շինությունների նկատմամբ Տատյանա Գլազովայի /ծնվ.1959թ./ սեփականության իրավունքը:

3.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՐՏԻ 2023թվականի N 35

ԱՐՄԵՆԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 որոշմամբ, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, հիմք ընդունելով հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1131569 վկայականը, "Գ.Վեքիլյան" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական՝ 6, 2011-12-05, մուտքագրման ծածկագիր՝ 2023ELYXNZ/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի 06-043-0235-0002 ծածկագրի տակ գտնվող 0,77360հա հողամասում 182,02քմ արտաքին տեսքով 2007 թ-ին կառուցված անշարժ գույքը և ճանաչել Արմենակ Պետրոսյանի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 186100 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**